evocaBANK

ԵՐԱՇԽԻՔ N 1518/27

1.Սույն երաշխիքը, ինչպես նաև սույն երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում են **ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ** (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից **ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/81** ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին **«ԱՐՄԴԵՄԱՆԴ» ՍՊԸ** (այսուհետ՝ պրինցիպալ) մասնակցելուց բխող՝ նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով **«Էվոկաբանկ» ԲԲԸ** (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **2,100,000.00 /Երկու միլիոն մեկ հարյուր հազար/** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջը ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ 1150001612200100** հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցիարի կողմից **ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/81** ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով պրինցիպալի կողմից հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված իննսուն աշխատանքային օր մինչ **25.11.2026թ**: Սույն երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ երաշխիքի համարը, տրամադրող բանկի անվանումը և սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագիրը՝ առանց գումարի չափի մասին նշման, երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է սույն կետում նշված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ norq-marash-gnumner@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում է հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը և երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կորպորատիվ վարկավորման

Վարչության ղեկավար ________________ Կ. Վա[illegible]անյան

Գլխավոր հաշվապահ ________________ [illegible]. Ջանինյան

ՀՀ. «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ
ARMENIA. "EVOCABANK" OJSC
АРМЕНИЯ. «ЭВОКАБАНК» ОАО
evocaBANK
00001182

N 1518/27

Date 27.05 2026

«Էվոկաբանկ» ՓԲԸ
"Evocabank" OJSC
44/2 Hanrapetutyan Street,
0010 Yerevan, Armenia
+374 10 60 55 55
hello@evoca.am
www.evoca.am